23/01/2017թ.

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հարգելի՛ փաստաբան ընկեր,

Ինչպես տեղյակ եք 2017թ. փետրվարի 11-ին նշանակված են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրությունները: Նշված ընտրություններին ես իմ թեկնածությունն եմ առաջադրել որպես խորհրդի անդամ և լիահույս եմ, որ Ձեր օգնությամբ կընտրվեմ:

Սույն ծրագրով ես կփորձեմ հակիրճ ներկայացնել այն տեսլականը, ըստ որի ես իմ գործունեությունն եմ ծավալելու խորհրդում: Եվ այսպես,

1. Անհրաժեշտ է օր առաջ ստեղծել ՀՀ փաստաբանների պալատի ղեկավար մարմինների միջև զսպումների ու հակակշիռների մեխանիզմ, հատկապես հաշվի առնելով խորհրդի վերահսկողական գործառույթները, ինչպես նաև այն, որ խորհուրդն է փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթներով որոշում կայացնող մարմինը: Այս առումով անհրաժեշտ եմ համարում խորհրդի անդամների կողմից միաժամանակ որևէ այլ պաշտոն պալատի մարմիններում զբաղեցնելու հնարավորության ի սպառ բացառումը: Նշվածը էապես կնվազեցնի խորհրդի անդամի կախվածությունը պալատի այլ մարմիններից և հատկապես պալատի նախագահից, ով հարուցում է կարգապահական վարույթ և դրանով արդեն իսկ ունի որոշակի նախատրամադրվածություն տվյալ գործով: Նշված գաղափարի իրականացումը կբերի նրան, որ խորհրդի անդամը իր աշխատավարձը կամ հասարակական դիրքը կորցնելու սպառնալիքի տակ ստիպված չի լինի քվեարկել այնպես, որպեսզի առավելագույնս բավարարում տա այն անձի շահերին ումից կախվածության մեջ է գտնվում: Տեղին եմ համարում նաև նշել, որ իմ ընտրվելու դեպքում, խորհրդի անդամի պաշտոնին զուգահեռ երբևէ չեմ զբաղեցնելու որևէ այլ պաշտոն ՀՀ փաստաբանների պալատում:
2. Անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել ՀՀ փաստաբանների պալատի աշխատանքի թափանցիկությունը: Ինչպես գիտեք ներկայումս փաստաբանների համար փակ է ֆինանսական հարցերով խորհրդի նիստերի քննարկումը և դրա վերաբերյալ փաստաթղթերը: Մասնավորապես՝ պալատի անդամ բոլոր փաստաբանների համար պետք է տեսանելի լինեն ինչպես ֆինանսական ծախսերի, պալատի հաստիքացուցակների մասին տեղեկությունները, այնպես էլ կարգապահական վարույթներ հարուցելու, հարուցումը մերժելու մասին

«ԳՅՈԶԱԼՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ» ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՄՊԸ |
ՀՀ, Երևան 0015, Արգիշտի 7, 301 սենյակ (Մոսկվայի տուն),
Հեռ. (374 10) 510256, (374 91) 328839
Էլ. փոստ՝ gevorg@lex.am
Կայք www.gyozalyan.com
www.lex.am

բոլոր որոշումները՝ ՀՀ օրենսդրության երաշխիքների պահպանմամբ: Կարծում եմ հարկ չկա ավելորդ անգամ հիմնավորելու, որ հնարավոր սխալները նվազագույնի հասցնելու, ողջամիտ կասկածները բացառելու լավագույն միջոցը թափանցիկության ապահովումն է, որի միջոցով փաստաբանը կարող է տեղեկանալ թե ինչու կոնկրետ դեպքում հարուցվեց կարգապահական գործ, իսկ կոնկրետ այլ դեպքում չհարուցվեց, ինչ ձևով ծախսվեց իր կողմից վճարված անդամավճարը, արդյո՞ք հիմնավորված է ՀՀ փաստաբանների պալատի հաստիքացուցակը և այլն:

3. Անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել ՀՀ փաստաբանության մասին օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին նախագծով առաջարկվող խիստ վտանգավոր կարգավորումները շտկելու ուղղությամբ: Մասնավորապես իմ ընտրվելու դեպքում ձեռնամուխ եմ լինելու որպեսզի այդ նախագծից դուրս գա փաստաբաններից անդամավճարները կանխավճարի ձևով գանձելու, կարգապահական խախտումների համար պատասխանատվության վաղեմության ժամկետների երկարացման, փաստաբանին արտոնագրից զրկելու գործընթացի դյուրինացման, կարգապահական վարույթները նախապատրաստող անձանց պալատի նախագահի կողմից նշանակելու, արտոնագրի կասեցումները անժամկետ դարձնելու և մի շարք այլ դրույթներ (առավել մանրամասն տե՛ս http://lex.am/proposals.php?n=18): Ավելորդ չեմ համարում նաև նշել, որ ես և մի քանի փաստաբաններ արդեն իսկ դիմել ենք ՀՀ կառավարություն՝ ներկայացնելով այդ Օրենքի նկատմամբ առաջարկները, սակայն ցավոք սրտի նրանք պատշաճ ուշադրություն չեն արժանացրել մեր առաջարկներին: Այս առումով, կարծում եմ ընտրվելու դեպքում կլինի հնարավորություն հրավիրել արտահերթ խորհրդի նիստ քննարկելու այդ վտանգավոր դրույթները և ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները գոնե ՀՀ ազգային ժողովում դրանք շտկելու ուղղությամբ:

4. Փաստաբանությունը ազատ մասնագիտություն է և հետևապես փաստաբանը պետք է գործի լիովին ազատ պայմաններում: Ծայրահեղ անընդունելի եմ համարում, երբ անտեղի միջամտություն է տեղի ունենում փաստաբանի մասնագիտական գործունեության նկատմամբ, ինչպես պետական մարմինների, այնպես էլ ՀՀ փաստաբանների պալատի կողմից: Փաստաբանի գործունեության նկատմամբ միջամտությունը պետք է լինի ողջամիտ, հիմնավորված և տրամաբանական: Այս առումով մեծ տեղ եմ տալիս ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստերին, հատկապես կարգապահական գործերով: Վերջերս իմ կողմից հարցում է կատարվել ՀՀ դատական դեպարտամենտին, ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ նոտարական պալատին և ՀՀ փաստաբանների պալատին հասկանալու համար թե որքան կարգապահական վարույթներ են հարուցվել այդ սուբյեկտների նկատմամբ (առավել մանրամասն տե՛ս http://lex.am/events.php?n=440): Ամենամեծ թիվ կազմում էին ՀՀ փաստաբանները, ինչը խորապես մտահոգիչ եմ համարում: Ընտրվելու դեպքում ես փորձելու եմ անել հնարավորը որպեսզի այս թիվը նվազի, մասնավորապես այն

«ԳՅՈԶԱԼՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ» ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՄՊԸ |
ՀՀ, Երևան 0015, Արգիշտի 7, 301 սենյակ (Մոսկվայի տուն),
Հեռ. (374 10) 510256, (374 91) 328839
էլ. փոստ՝ gevorg@lex.am
Կայք www.gyozalyan.com
www.lex.am

խախտումները որոնք կրում են բացառապես քաղաքացիաիրավական բնույթ պետք է լուծվեն ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով: Փաստաբանը դատարանում և այլուր իր գործունեությունը կազմակերպելիս պետք է վստահ լինի, որ իր թիկունքում ունի համայնք, որը ոչ միայն իրեն չի հարվածի, այլև կանի բոլոր հնարավորը սատար կանգնելու իրեն:

5. Անընդունելի եմ համարում ՀՀ փաստաբանների խորհրդում թիմային գործելաոճը, երբ խորհրդի անդամները կաշկանդված են լինում թիմի շահերով: Այս առումով գտնում եմ, որ ցանկացած հարցի լուծումը պետք է պայմանավորված լինի բացառապես օբյեկտիվ իրականությամբ, ուստի հարկ եմ համարում նշել, որ ես Խորհրդում գործելու եմ ելնելով բացառապես փաստաբանի և համայնքի շահերից և ձեռնարկելու եմ բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի խորհրդի նիստերը անցնեն գաղափարների սուր բախումներով և դրանք չկրեն զուտ մեխանիկական քվեարկություններ: Այս առումով պետք է հստակ գործի հայտնի՝ «***Արդար լինես և հաղթես, երբ դատում են քեզ***» կանոնը, որի պայմաններում միշտ հաղթող է արդարը, արդար գաղափարը:

6. Խորհրդի նիստերը պետք է լինեն ոչ միայն թափանցիկ այլ նաև ձեռնհաս: Անհրաժեշտ եմ համարում որպեսզի խորհրդի աշխատանքները կանոնակարգվեն ոչ միայն Կանոնադրությամբ, վարքագծի կանոնագրքով, այլ կոնկրետ՝ «Խորհրդի նիստերի անցկացման կարգով», որի շրջանակներում պետք է հստակ նշվի, որ խորհրդի նիստերի ժամանակ չի թույլատրվում խորհրդի անդամների ոչ ձեռնհաս բանավեճը միմյանց հետ: Մասնավորապես անցած փորձը ցույց տվեց, որ շատ ժամանակ խորհրդի մեկ անդամը կոպիտ դիտողություն է անում խորհրդի մյուս անդամին՝ կարգապահական կողմերի ներկայությամբ և այն դեպքում, երբ այդ նիստը հեռարձակվում է: Նշվածը բերում է նրան, որ լայն շրջանակներում ակնհայտ անվստահություն է առաջանում խորհրդի նկատմամբ: Մեկ այլ օրինակ է, երբ խորհրդի անդամների՝ կոնկրետ առարկայի վերաբերյալ բանավեճը դուրս է գալիս իր բուն էությունից և վեր է ածվում անձնական խնդիրների պարզման: Մեկ այլ դեպք է, երբ խորհրդի անդամը բացակայում է խորհրդի նիստերից և փաստաբանը որևէ ձևով տեղեկացված չէ թե ինչո՞ւ իր կողմից ընտրված կամ չընտրված խորհրդի անդամը ներկա չէ կոնկրետ նիստին: Ցանկանում եմ հիշեցնել, որ նախկինում ներկա խորհուրդը ոչ միան սահմանել է կոնկրետ չափանիշներ անհարգելի բացակայությունների համար, այլ նաև մինչ այդ չափանիշները սահմանելը կոնկրետ խորհրդի անդամի է հեռացրել՝ գտնելով, որ նրա բացակայությունները անհարգելի են թեև այդ պահին առկա չի եղել որևէ իրավական ակտ, որով սահմանված կլիներ ինչ-որ չափանիշ: Այս երկու դեպքերն էլ որևէ ձևով չեն կարգավորել խորհրդի անդամի բացակայությունների հարցը, քանի որ որևէ փաստաբան տեղյակ չէ թե կոնկրետ դեպքում ինչու ներկա չէ խորհրդի անդամը: Այս առումով պետք է մշակվի կոնկրետ իրավական ակտ, որով կկանոնակարգվի վերը նշված հարցերը:

«ԳՅՈԶԱԼՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ» ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՍՊԸ |
ՀՀ, Երևան 0015, Արգիշտի 7, 301 սենյակ (Մոսկվայի տուն),
Հեռ. (374 10) 510256, (374 91) 328839
Էլ. փոստ՝ gevorg@lex.am
Կայք www.gyozalyan.com
www.lex.am

Վերը նշված վեց կետերը կազմում են այն կարևորագույն առաջնահերթ քայլերը, որոնք ես կփորձեմ իրականացնել խորհրդում՝ ընտրվելու պարագայում: Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ խորհրդի անդամները կազմված են 12 փաստաբաններից, ուստի իմ ծրագրային դրույթների իրականացման առումով ես անհատապես կաշխատեմ այն ընտրված փաստաբանների հետ ում ծրագրային դրույթներում կլինեն այնպիսիք որոնք առավելագույնս կհամապատասխանեն իմ կողմից մատնանշվածին:

Շնորհակալություն կարդալու համար: Ես չեմ խնդրում որպեսզի Ձեր ձայնը պարտադիր տաք ինձ, թեև հայցում եմ այն, ես թախանձագին խնդրում եմ կատարել գիտակցված ընտրություն և ոչ երբեք մեխանիկական ինչ-որ ցուցակներին նայելով, որի անվերապահ հիմքը կլինի ԱԶԱՏ փաստաբանական համայնք ունենալը:

Ամենայն բարիք Ձեզ

Գևորգ Գյոզալյան

ՓԱՍՏԱԲԱՆ
ԳԵՎՈՐԳ
ԳՅՈԶԱԼՅԱՆ
ԱՐՏՈՆԱԳԻՐ
715

«ԳՅՈԶԱԼՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ» ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՍՊԸ |
ՀՀ, Երևան 0015, Արգիշտի 7, 301 սենյակ (Մոսկվայի տուն),
Հեռ. (374 10) 510256, (374 91) 328839
էլ. փոստ՝ gevorg@lex.am
Կայք www.gyozalyan.com
www.lex.am